Հավելված N 9
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1241 - Ն որոշման

ՑԱՆԿ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱՆՅՈՒԹԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐԳԵԼՎԱԾ ՍՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ

1. Սննդամթերքի հետևյալ տեսակների և խմբերի արտադրության ժամանակ ներկանյութերի օգտագործումը չի թույլատրվում՝

1) չմշակված սննդամթերք.

2) պաստերացված կամ մանրէազերծված կաթ, չբուրավետացված շոկոլադային կաթ.

3) չբուրավետացված կաթնաթթվային մթերքներ, չորաթան.

4) պահածոյացված, խտացրած, չբուրավետացված կաթ, սերուցք.

5) բանջարեղեն (բացի ձիթապտուղներից), թարմ, չորացրած, պահածոյացված մրգեր, սնկեր, այդ թվում՝ խյուսեր և մածուկներ.

6) ձու և մթերքներ ձվից (զատիկի ձվերի կեղեվի ներկման համար թույլատրվում են հավելված 11-ում նշված ներկանյութերը).

7) հում, առանց այլ նյութերի ավելացման միս, որսի միս, թռչուն, խեցգետնակերպեր, փափկամորթեր, ամբողջական կամ կտորներով կամ մանրեցված, ներառյալ խճողակը.

8) ալյուր, ձավարեղեն, օսլա.

9) մրգեր, բանջարեղեն, սնկեր, թարմ, չորացրած, պահածոյացված (այդ թվում մածուկներ և խյուսեր), մրգային և բանջարեղենային հյութեր, մրգային նեկտարներ, մածուկներ, խյուսեր.

10) տոմատի մածուկ և սոուս, պահածոյացված լոլիկներ.

11) շաքար, խաղողաշաքար, մրգաշաքար, կաթնաշաքար.

12) մեղր.

13) կակաո մթերքներ, շոկոլադային բաղադրիչներ հրուշակեղենում և այլ արտադրանքում.

14) մակարոնային արտադրանք.

15) բոված սուրճ, եղերդ, թեյ, դրանցից հյութեր, թեյի, բուսական, մրգային պատրաստուկներ թուրմերի համար և դրանց լուծվող խառնուրդները.

16) ածիկ և ածիկով ընպելիքներ.

17) համեմունքներ և խառնուրդներ դրանցից.

18). կերակրի աղ, աղի փոխարինիչներ.

19) շշալցված խմելու ջուր.

20) գինի, մրգային սպիրտ, մրգային սպիրտային խմիչքներ և գինու քացախ.

21) կենդանական ու բուսական ծագման յուղ և ճարպ.

22) հասունացած և չհասունացած չբուրավետացված պանիրներ.

23) հաց.

24) հատուկ նշանակության սննդամթերք մինչև 3 տարեկան առողջ և հիվանդ երեխաների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ